



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հուլիսի 2024 թվականի N <sup>262</sup> -Ա

«ՔԱԶԱՐԱՆԻ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  
ՀԱՍՄԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՅՉՈՒՎ ԾԱՀԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի  
2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ  
հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք  
ընդունելով «Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային  
կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հայրապետյանի  
դիմումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. «Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային  
կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հասմիկ  
Հայրապետյանին 2024 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 23-ը ներառյալ  
տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա  
արձակուրդը՝ 25 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոց»  
պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների  
կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսուցչուհի Շահանե  
Ավետիսյանին:



2024-07-11 12:20:37 GMT+4  
Հավանական է էԷՆՏԳ-ի կողմից



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ